ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/3896/05/22

Վարչական գործ թիվ **ՎԴ/3896/05/22**
2025թ.

Նախագահող դատավոր՝ Ռ. Մախմուդյան
Դատավորներ՝ Կ. Ավետիսյան
Ս. Հովակիմյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2025 թվականի ապրիլի 17-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 22.05.2024 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության 04.05.2022 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ

0018-Ա ակտը և «Մաքսային գործի ոլորտում» թիվ 0018-Ո-1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության 04.05.2022 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0018-Ա ակտը և «Մաքսային գործի ոլորտում» թիվ 0018-Ո-1 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 15.02.2023 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.05.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Ալբերտ Արզումանյան):

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասը, 27-րդ հոդվածի 1-ին մասը, Եվրասիական տնտեսական միության (այսուհետ նաև՝ ԵԱՏՄ) մաքսային օրենսգրքի 126-րդ և 134-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

ՀՀ կառավարության 19.03.2020 թվականի թիվ 311-Ա որոշման համաձայն՝ Ընկերության կողմից ներմուծվող ապրանքները պետք է օգտագործվեն ցինկապատ մետաղական տանիքի ծածկերի, ջրահեռացման համակարգերի և համալրող այլ աքսեսուարների, եվրոդուռ-լուսամուտների և գիպսակարտոնի պրոֆիլների արտադրության համար: Այսինքն՝ ՀՀ կառավարության 19.03.2020 թվականի թիվ 311-Ա որոշմամբ Ընկերությանը մաքսատուրքի արտոնությունը տրվել է պայմանով, որ ներմուծված հումքից և նյութերից պետք է ստացվի վերջնական արտադրանք՝ առնվազն մետաղական տանիքի ծածկ: Մինչդեռ ըստ արտագնա ստուգման շրջանակներում ձեռք բերված ապացույցների՝ Ընկերությունը «սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղը՝ ներկված, պոլիմերային ծածկույթով գլանափաթեթով» հումքը վաճառել է հարթ վիճակում, առանց լրացուցիչ վերամշակման: Նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ընկերությունը հումքն իրացրել է առաջնային ձևով:

Ըստ Վերաքննիչ դատարանի՝ Ընկերության կողմից ներմուծված հումքը չի իրացվել առաջնային ձևով. առնվազն կտրտվել է: Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը հակասում է ՀՀ կառավարության 19.03.2020 թվականի թիվ 311-Ա որոշման Կարգի 3-րդ կետով նախատեսված սահմանափակմանը, և կտրտման գործողությունը չի կարող դիտարկվել արտադրական գործընթաց: Մաքսատուրքի արտոնությամբ ներմուծված ապրանքների իրացումն առանց արտադրական գործընթացի իրականացման, համարվում է ապրանքների օգտագործման և տնօրինման սահմանափակումների խախտում: Ըստ այդմ՝ վիճարկվող ակտով իրավաչափորեն հիմնավորվել է Ընկերության կողմից ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126-րդ և 134-րդ հոդվածների պահանջների խախտումը, այն է՝ չի պահպանվել պայմանականորեն բաց թողնված ապրանքներին վերաբերող օտարման սահմանափակման պահանջը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.05.2024 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.

Վարչական մարմնի պնդումն առ այն, որ հումքն ուղղակի վաճառվել է, հիմնավոր չէ: Ընկերությունը ներմուծել է հումք և ըստ պատվերների պատրաստել թիթեղներ: Հարթ թիթեղ պատրաստելու համար հումքն անցնում է վերամշակում հաստոցի միջոցով, 4-5 աշխատողի մասնակցությամբ: Հարթ թիթեղների գնորդները դրանք գնել են որպես վերջնական արտադրանք, իրենց գործունեության մեջ օգտագործելու համար: Ներմուծված հումքը նախքան վաճառվելն առնվազն կտրտվել է, ինչը նշանակում է, որ Ընկերությունը չի իրացրել գլանափաթեթները դրանց ներմուծման առաջնային ձևով: Հետևաբար, խնդրո առարկա արտոնությունից օգտվելու համար սահմանված պայմանը Ընկերության կողմից պահպանվել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրել է մերժել վճռաբեկ բողոքը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 19.03.2020 թվականի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» թիվ 311-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ Թիվ 311-Ա որոշում), ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2015 թվականի թիվ 1118-Ն որոշման պահանջներով, ՀՀ կառավարությունը բավարարել է Ընկերության կողմից ներկայացված

հայտը գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար և սահմանված կարգով կիրառել է համապատասխան արտոնությունը՝ համաձայն հավելվածի ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ:

Թիվ 311-Ա որոշման հավելվածի համաձայն՝ ներմուծման մաքսատուրքի արտոնությունից օգտվող հումքն է սև մետաղյա ցինկապատ հարթ թիթեղ գլանափաթեթով, չներկված՝ առանց պոլիմերային ծածկույթի, և սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատ հարթ թիթեղ գլանափաթեթով, ներկված՝ պոլիմերային ծածկույթով **(հատոր 1, գ. թ. 17-18)**:

2) Թիվ 311-Ա որոշմամբ տրամադրված արտոնության շրջանակներում Ընկերությունը Հայաստանի Հանրապետություն է ներմուծել սև մետաղյա ցինկապատ հարթ թիթեղ գլանափաթեթով, չներկված՝ առանց պոլիմերային ծածկույթի, և սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատ հարթ թիթեղ գլանափաթեթով, ներկված՝ պոլիմերային ծածկույթով **(հատոր 1, գ. թ. 19-20)**:

3) Մաքսային մարմնի ղեկավարի 24.02.2022 թիվ 0018 կարգադրագրով, ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 333-րդ և «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 133-րդ հոդվածներով, կարգադրվել է Ընկերության մոտ նշանակել արտապլանային արտագնա մաքսային ստուգում: Կարգադրագրով Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչությանը հանձնարարվել է ստուգել 01.03.2019 թվականից ԵԱՏՄ ԱՏԳ 7210708000 ծածկագրով հայտարարագրված ապրանքներին վերաբերող, ԵԱՏՄ և ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման ճշտությունը **(հատոր 1, գ. թ. 21)**:

4) Արտագնա մաքսային ստուգման ընթացքում Ընկերության տնօրենի կողմից 26.04.2022 թվականին տրվել է հայտարարություն առ այն, որ Թիվ 311-Ա որոշման հիման վրա «ՀՀ են ներմուծվել վերամշակման նպատակով, սակայն՝ ցինկապատ հարթ թիթեղներ, հումքը որոշակի մասը կոմպլեկտավորման արդյունքում ձևավոր վերամշակում չի անցել, ըստ պատվիրված չափերի կտրտվել և վաճառվել է հարթ վիճակում **(հատոր 1, գ. թ. 24):**

5) Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության 04.05.2022 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0018-Ա ակտով արձանագրվել է. «Մաքսային ստուգման ընթացքում՝ ընկերության հաշվապահական հաշվառման ծրագրից և ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 316 հոդվածի 1-ին կետի, 1-ին ենթակետի համաձայն ներկայացված փաստաթղթերից պարզվեց, որ ընկերությունը իրականացնում է նաև հումքի և նյութերի մանրածախ և մեծածախ վաճառք: Մաքսատուրքի արտոնությամբ ներմուծված ապրանքների շարժի վերաբերյալ ընկերության կողմից ներկայացվել է 07.03.2022թ. տեղեկանքը և 26.04.2022թ. հայտարարությունը, համաձայն որի ընկերության կողմից կոմպլեկտավորման արդյունքում, վաճառվել են նաև մաքսատուրքի արտոնությամբ ներմուծված «Սև մետաղյա

երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով» ապրանքատեսակը հարթ վիճակում, առանց լրացուցիչ վերամշակման: Քանի որ մաքսատուրքի արտոնությամբ ներմուծված ապրանքների իրացումն առանց արտադրական գործընթացի իրականացման համարվում է ապրանքների օգտագործման և տնօրինման սահմանափակումների խախտում, ուստի ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126 և 134 հոդվածների պահանջների համաձայն՝ պայմանականորեն բաց թողնված և մաքսատուրքի արտոնությամբ ձևակերպված և ուղղակի վաճառված ապրանքների համար ներմուծման մաքսատուրքերը, հարկերը ենթակա են վճարման ձևակերպման օրվա դրությամբ գործող մաքսատուրքերի, հարկերի գումարին համարժեք չափով, որոնք չեն վճարվել ապրանքները «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնելիս՝ կապված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների կիրառման հետ: (...) Այսպիսով ընկերության կողմից խախտվել է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126 և 134 հոդվածների պահանջները՝ չի պահպանվել պայմանականորեն բաց թողնված ապրանքներին վերաբերվող սահմանափակումների պահանջը» **(հատոր 1, գ. թ. 27-30)**:

6) 04.05.2022 թվականին կազմվել է «Մաքսային գործի ոլորտում» թիվ 0018-Ո-1 որոշումը, որով Ընկերությանը պարտավորեցվել է հայտարարագրերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ վճարելով պակաս հաշվարկված մաքսային վճարները և տույժերը՝ 2.150.205 ՀՀ դրամ **(հատոր 1, գ. թ. 31):**

<u>4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.</u>

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ պայմանականորեն բաց թողնված ապրանքների առնչությամբ ներմուծման մաքսատուրքերի արտոնության կիրառման հետ կապված՝ այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումներին:

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» վերտառությամբ արձանագրության (Հավելված 6) (այսուհետ՝ Արձանագրություն) 3-րդ կետի համաձայն՝ ներմուծման մաքսատուրքի

վճարումից ազատելու հնարավորություն նախատեսող սակագնային արտոնությունները տրվում են երրորդ երկրներից Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) հետևյալ ապրանքների դեպքում՝

1) ապրանքներ՝ որպես օտարերկրյա հիմնադրի ներդրում կանոնադրական (պահուստային) կապիտալում (ֆոնդում)՝ այդ կապիտալի (ֆոնդի) ձևավորման համար հիմնադիր փաստաթղթերում նախատեսված ժամկետների սահմաններում: (...)

2) ապրանքներ, որոնք ներմուծվում են տիեզերական տարածքի հետազոտման և օգտագործման, այդ թվում՝ տիեզերական ապարատները տիեզերք բաց թողնելու առնչությամբ ծառայությունների մատուցման բնագավառում միջազգային համագործակցության շրջանակներում՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող ցանկի համաձայն.

3) անդամ պետությունների նավերի, ինչպես նաև անդամ պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից վարձակալված (վարձված) նավերի՝ խորջրյա գոտիներում արդյունագործական ձկնորսության արտադրանք.

4) անդամ պետությունների արժույթ, երրորդ երկրների արժույթ (բացառությամբ դրամագիտական նպատակներով օգտագործվող արժույթի), ինչպես նաև արժեթղթերի արժույթ՝ անդամ պետությունների օրենսդրության համաձայն.

5) մարդասիրական օգնության շրջանակներում և (կամ) տարերային աղետների, վթարների և աղետների հետևանքները վերացնելու նպատակով ներմուծվող ապրանքներ.

6) երրորդ երկրների, միջազգային կազմակերպությունների, կառավարությունների գծով բարեգործական նպատակներով ներմուծվող և (կամ) անդամ պետությունների օրենսդրություններին համապատասխան որպես անհատույց օգնություն (աջակցություն), այդ թվում՝ տեխնիկական օգնություն (աջակցություն) ճանաչվող ապրանքներ՝ բացի ենթաակցիզային ապրանքներից (բացառությամբ թեթև մարդատար մեքենաների, որոնք հատուկ նախատեսված են բժշկական նպատակների համար):

Արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ երրորդ երկրներից Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների դեպքում սակագնային արտոնություններ կարող են տրվել նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով, երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերով, Հանձնաժողովի որոշումներով սահմանված այլ դեպքերում:

Արձանագրությունը, սահմանելով երրորդ երկրներից Միության մաքսային տարածք ներմուծվող այն ապրանքների ցանկը, որոնց տրվում են ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատելու հնարավորություն նախատեսող սակագնային արտոնություններ (3-րդ կետ), միաժամանակ 4-րդ կետով նման արտոնությունների կիրառումը հնարավոր է համարում նաև «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով, երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերով, Հանձնաժողովի որոշումներով սահմանված այլ դեպքերում:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատելու կամ ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը նվազեցնելու ձևով սակագնային արտոնությունները սահմանվում են Միության մասին պայմանագրի 6-րդ հավելվածին համապատասխան: Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Կառավարությունը կարող է սահմանել սակագնային առանձին արտոնությունների կիրառության կարգ՝ Հանձնաժողովի սահմանած դեպքերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից մինչև 2015 թվականի հունվարի 1-ը կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված արտոնությունների կիրառման համար:

Վերը նշված կարգավորումների՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 6-րդ հավելվածի «Միասնական սակագնային կարգավորման» արձանագրության 4-րդ կետի և «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասերի իրավական հիմքով ՀՀ կառավարությունը 17.09.2015 թվականին ընդունել է «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման կարգը հաստատելու և լիազոր մարմին ճանաչելու մասին» թիվ 1118-Ն որոշումը (այսուհետ նաև՝ Թիվ 1118-Ն որոշում): Թիվ 1118-Ն որոշման 1-ին կետով սահմանվել է, որ գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար նախատեսված տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և նյութերի ներմուծումն ազատվում է օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված մաքսատուրքից, եթե այդպիսի տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը չեն արտադրվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում, կամ արտադրվում են ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ բավարար քանակով, կամ չեն համապատասխանում ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին: Թիվ 1118-Ն որոշման 3-րդ կետով հաստատվել է գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման կարգը (այսուհետ՝ Կարգ):

Կարգի 2-րդ կետը սահմանում է դրանում կիրառվող հիմնական հասկացությունների բովանդակությունը. ըստ Կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետի՝ ներդրումային ծրագիրը արտադրական, տրանսպորտային և (կամ) ինժեներական ենթակառուցվածքի առկա օբյեկտների վերազինմանը (արդիականացման, վերակառուցման) կամ նոր օբյեկտների ստեղծմանն ուղղված ներդրումներ նախատեսող միջոցառումների համալիր է, որն իրականացվում է նույն կարգով սահմանված (տնտեսության ոլորտների) գործունեության

գերակա ոլորտներում: Ըստ Կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գործառնական (արտադրական և այլ) գործունեությունն ընկերության (կազմակերպության) ներդրումային ծրագրի շրջանակում նախատեսվող գործունեության տեսակ է: Նպատակային օգտագործումը գործառնական գործունեության իրականացման նպատակով օգտագործումն է: Կարգի 3-րդ կետը սահմանում է գերակա համարվող ոլորտների ցանկը:

Կարգի 4-րդ կետը սահմանում է. «Մաքսատուրքից ազատելու արտոնությունը կիրառվում է գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ և համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի (այդ թվում՝ լիզինգով ձեռք բերված) նկատմամբ, որոնք չեն արտադրվում ԵԱՏՄ անդամ երկրներում (կամ արտադրվում են ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ բավարար քանակով), կամ ԵԱՏՄ անդամ երկրներում արտադրվող նմանատիպ ապրանքները չեն համապատասխանում ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին»:

Կարգի 5-րդ կետի համաձայն՝ Կարգի 4-րդ կետով սահմանված արտոնությամբ ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ և համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը պետք է օգտագործվեն նպատակային (ներդրումային ծրագրի իրականացման շրջանակներում) և բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում:

Վերը նշված կարգավորումներից բխում է, որ Թիվ 1118-Ն որոշմամբ տրամադրվող մաքսային արտոնությունը դրսևորվում է մաքսատուրքից ազատելու ձևով: Մաքսատուրքից ազատվում են Հայաստանի Հանրապետություն ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը: Նշված արտոնության կիրառման անհրաժեշտ պայմաններն են.

- ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը բացառապես պետք է օգտագործվեն Հայաստանի Հանրապետության տարածքում,

- ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը բացառապես պետք է օգտագործվեն Թիվ 1118-Ն որոշմամբ սահմանված գերակա համարվող ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում,

- ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և նյութերը չեն արտադրվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում, կամ արտադրվում են ներդրումային ծրագրի իրականացման համար ոչ բավարար քանակով, կամ չեն համապատասխանում ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական չափանիշներին:

Կարգի 7-րդ կետի համաձայն՝ նույն Կարգի 4-րդ կետով սահմանված արտոնությամբ ներմուծված՝

1) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ և համալրող մասերն անձը չի կարող օտարել առնվազն մինչև ներդրումային ծրագրի իրականացման ժամկետի ավարտը կամ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ձեռք բերելը.

2) հումքը և (կամ) նյութերն անձը չի կարող օտարել ներմուծված առաջնային ձևով մինչև ներդրումային ծրագրի իրականացման ժամկետի ավարտը կամ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ձեռք բերելը, (առաջնային ձև է համարվում, եթե ծրագրով նախատեսված գործունեությամբ որևէ փոփոխության չի ենթարկվել).(...):

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ մաքսատուրքից ազատելու արտոնություն ստանալու համար ապրանքներ ներմուծող անձը գրավոր կամ էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում հայտ՝ նույն Կարգի 14-րդ կետին համապատասխան: Հայտը, ի թիվս այլնի, պետք է ներառի ներդրումային ծրագիրը (Կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետ): Վերջինս իր հերթին պետք է բովանդակի ներդրումային ծրագրի համառոտ նկարագրությունը (ծրագրի նպատակը, իրականացվելիք աշխատանքները, մրցակցային առավելությունները, արտահանման ուղղությունները և քաղաքականությունը, ծրագրով նախատեսված գործունեության տեսակի հստակ նկարագրությունը և այլն):

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ հայտը ՀՀ էկոնոմիկայի նախարարություն մուտքագրվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում (...) ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվում է մաքսատուրքի արտոնության տրամադրման ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ (...):

Կարգի 31-րդ կետը սահմանում է արտոնությունը դադարեցնելու հիմքերը: Դրանցից մի քանիսը բխում են արտոնության կիրառման պայմաններից և Կարգով սահմանված արգելքներից: Այն է՝ արտոնությունը դադարեցվում է, եթե ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ և համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը չեն օգտագործվել Թիվ 1118-Ն որոշման իմաստով գերակա ոլորտում (ոլորտներում) (Կարգի 31-րդ կետի 1-ին ենթակետ), ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ և համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը չեն օգտագործվել նպատակային (ներդրումային ծրագրի իրականացման նպատակով) և բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում (Կարգի 31-րդ կետի 2-րդ ենթակետ), հումքը և (կամ) նյութերն անձն օտարել է ներմուծված առաջնային ձևով մինչև ներդրումային ծրագրի իրականացման ժամկետի ավարտը կամ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ձեռք բերելը (Կարգի 31-րդ կետի 3-րդ ենթակետ):

Կարգի 34-րդ կետը սահմանում է. «Ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ և համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը, որոնց նկատմամբ կիրառվում է մաքսատուրքից ազատման արտոնություն, համարվում են պայմանական բաց թողնված մինչև ներդրումային ծրագրի ավարտը կամ սույն

կարգով նախատեսված դեպքերում դադարեցումը կամ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ձեռք բերելը:

Եթե սույն կարգով նախատեսված դեպքերում դադարեցումը տեղի է ունեցել ավելի շուտ, քան պայմանական բաց թողնված ապրանքի կարգավիճակ ունենալու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը, ապա դրանք համարվում են պայմանական բաց թողնված՝ մինչև օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտը:

Այդ ապրանքներն օրենսդրության պահանջների խախտմամբ օգտագործելու դեպքում անձը կրում է օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն»:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածը սահմանում է պայմանականորեն բաց թողնված ապրանքների շրջանակը: Նշված հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պայմանականորեն բաց թողնված են համարվում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքները, որոնց դեպքում կիրառվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների առնչությամբ պետք է պահպանվեն ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակներն ու պայմանները, ինչպես նաև այդպիսի արտոնությունների կիրառման հետ կապված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով սահմանափակումները:

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգն օտարերկրյա ապրանքների առնչությամբ կիրառվող այն մաքսային ընթացակարգն է, որին համապատասխան ապրանքները Միության մաքսային տարածքում գտնվում և օգտագործվում են առանց օտարերկրյա ապրանքների առնչությամբ՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով և ակտերով նախատեսված՝ տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման սահմանափակումների, եթե այլ բան սահմանված չէ նույն Օրենսգրքով:

Վերը նշված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության Թիվ 1118-Ն որոշմամբ սահմանված մաքսային արտոնությունից օգտվելու համար ոչ միայն անհրաժեշտ է բավարարել այդ որոշմամբ սահմանված պայմանները, այլ նաև արտոնությունից օգտվող տնտեսվարող սուբյեկտից պահանջվում է պահպանել արտոնությամբ ներմուծված ապրանքների՝ Թիվ 1118-Ն որոշմամբ սահմանված օգտագործման և տնօրինման սահմանափակումները: Այդ սահմանափակումների խախտման իրավական հետևանքն արտոնության դադարեցումն է: Թիվ 1118-Ն որոշմամբ տրամադրված արտոնությամբ ներմուծված տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ և համալրող մասերի, հումքի և նյութերի տնօրինման սահմանափակումն ամրագրված է Կարգի

7-րդ կետում: Մասնավորապես, արտոնությամբ ներմուծված հումքը և (կամ) նյութերն անձը չի կարող օտարել ներմուծված առաջնային ձևով մինչև ներդրումային ծրագրի իրականացման ժամկետի ավարտը կամ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ձեռք բերելը: Ներմուծված հումքի և նյութերի օտարման նման սահմանափակումը միտված է ներդրումային ծրագրի իրագործումը, ներմուծված հումքի ու նյութերի նպատակային օգտագործումը երաշխավորելուն:

Միաժամանակ, Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետում հստակեցված է «առաջնային ձև» հասկացության բովանդակությունը: Այն է՝ հումքը և (կամ) նյութն իր առաջնային ձևով է, եթե ծրագրով նախատեսված գործունեությամբ որևէ փոփոխության չի ենթարկվել: Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետում «առաջնային ձև» հասկացության բովանդակությունից բխում է, որ փոփոխության ոչ բոլոր դրսևորումներն են հանգեցնում հումքի և (կամ) նյութի առաջնային ձևի կորստի: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետում շեշտադրումը կատարված է այն փոփոխության (փոփոխությունների) վրա, որոնք տեղի են ունենում ծրագրով նախատեսված գործունեության արդյունքում: Այսինքն՝ արտոնությամբ ներմուծված հումքը և (կամ) նյութը կորցնում է իր առաջնային ձևը, դադարում է առաջնային ձևով գոյություն ունենալուց միայն այն փոփոխության (փոփոխությունների) ուժով, որը կատարվել է ներդրումային ծրագրով նախատեսված գործունեության արդյունքում:

Ըստ այդմ՝ հաշվի առնելով Կարգի 2-րդ կետում «ներդրումային ծրագիր», «գործառնական գործունեություն», «նպատակային օգտագործում» հասկացությունների բովանդակությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Թիվ 1118-Ն որոշմամբ սահմանված մաքսային արտոնությամբ ներմուծված հումքը և (կամ) նյութերը մինչև ներդրումային ծրագրի իրականացման ժամկետը կարող են օտարվել միայն այն դեպքում, երբ փոփոխության են ենթարկվել ծրագրով նախատեսված գործունեության արդյունքում: Այլ կերպ՝ օտարումն իրավաչափ է ոչ ցանկացած փոփոխության դեպքում. էական է, որ այդ փոփոխությունը կատարված լինի ծրագրով նախատեսված գործունեության արդյունքում:

Հետևաբար, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշելու համար՝ արդյո՞ք ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջին համապատասխան պահպանվել է Թիվ 1118-Ն որոշմամբ սահմանված մաքսային արտոնությամբ ներմուծված հումքի և (կամ) նյութերի՝ Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված օտարման սահմանափակումը, նախևառաջ անհրաժեշտ է ուսումնասիրության առարկա դարձնել մաքսատուրքից ազատելու արտոնություն ստանալու համար ապրանքներ ներմուծող անձի ներկայացրած հայտում նկարագրված ներդրումային ծրագիրը: Ներդրումային ծրագրի ուսումնասիրությամբ անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք կատարված փոփոխությունը տեղի է ունեցել ներդրումային ծրագրով նախատեսված գործունեության արդյունքում:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության Թիվ 1118-Ն որոշման շրջանակներում ներմուծված հումքի և (կամ) նյութերի

օտարման դեպքում ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը պահպանված կարող է համարվել, եթե օտարված հումքը և (կամ) նյութերը ենթարկվել են այնպիսի փոփոխության, որոնք արդյունք են մաքսատուրքից ազատելու արտոնություն ստանալու համար ապրանքներ ներմուծող անձի ներկայացրած հայտում նկարագրված ներդրումային ծրագրով նախատեսված գործունեության:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության 04.05.2022 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0018-Ա ակտը և «Մաքսային գործի ոլորտում» թիվ 0018-Ո-1 որոշումը:

Դատարանը 15.02.2023 թվականի վճռով հայցը բավարարել է այն պատճառաբանությամբ, որ. *«(...) Դատավարության մասնակիցների վեճը վերաբերում է այն հանգամանքին՝ արդյոք Հայցվորի կողմից պահպանվել է պայմանականորեն բաց թողնված ապրանքներին վերաբերող սահմանափակումների պահանջը, թե ոչ:*

(...) վիճարկվող վարչական ակտերի կայացմամբ արձանագրվել է, որ Հայցվորը հումքն իրացրել է առաջնային ձևով:

Միաժամանակ, Պատասխանող վարչական մարմինը նման եզրահանգման համար հիմք է ընդունել բացառապես 07.03.2022 թվականի տեղեկանքը, 26.04.2022 թվականի հայտարարությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման փաստաթղթերը:

(...) ինչպես տեղեկանքով, այնպես էլ հարկային հաշիվներով մատակարարված ապրանքների նկարագրությունը տարբերվում է ապրանքի առաջնային ձևի նկարագրությունից, այն է՝ «սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով»: Այսինքն, առաջնային ձև գլանապատված է, մատակարարված ձևն ըստ այդ փաստաթղթերի՝ ոչ:

Անդրադառնալով 26.04.2022 թվականի հայտարարությանը, հարկ է նշել, որ դրանով «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է, որ ներմուծված հումքի որոշակի մասը կոմպլեկտավորման արդյունքում ձևավոր վերամշակում չի անցել, ըստ պատվիրված չափերի կտրտվել և վաճառվել է հարթ վիճակում: Այսինքն, տնօրենի հայտարարությունից առնվազն ակնհայտ է, որ ներմուծված ապրանքը կտրտվել է:

Ամփոփելով վիճարկվող վարչական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած նշված փաստաթղթերի ուսումնասիրությունը՝ կարելի է հանգել մեկ ընդհանուր հետևության, որ ներմուծված ապրանքները չեն իրացվել առաջնային ձևով՝ առնվազն կտրտվել են: Միաժամանակ, նշված փաստաթղթերը բավարար չեն պարզելու՝ արդյոք Հայցվորը ներմուծված ապրանքն օգտագործել է նպատակային՝ ներդրումային ծրագրի իրականացման շրջանակներում, որպես տանիքի ծածկ, թե ոչ:

Մինչդեռ Պատասխանող մարմինը նշված հանգամանքը քննության առարկա չի դարձրել, բազմակողմանի քննություն չի իրականացրել՝ պարզելու՝ արդյոք «սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով» ապրանքային տեսքից ստացված «գունավոր թիթեղ հարթ» և «ցինկապատ թիթեղ հարթ» ապրանքային տեսքը տանիքի ծածկ է, թե ոչ, ձեռք չի բերել լրացուցիչ ապացույցներ և բավարարվել թերի ապացույցների կազմով: Այսինքն, Պատասխանողը, չունենալով Հայցվորի կողմից ներդրումային ծարգրով ներմուծված ապրանքները նպատակային օգտագործված չլինելու փաստը հավաստող բավարար ապացույցներ, իրականացված թերի վարչարարության արդյունքում Հայցվորին պատասխանատվության է ենթարկել:

(...) Պատասխանողի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի խախտումը հանգեցրել է նույն օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների պահանջների խախտման:

Մասնավորապես, (...) Պատասխանողի կողմից քննության առարկա չի դարձվել առանցքային այն հարցը՝ արդյոք «սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով» ապրանքային տեսքից ստացված «գունավոր թիթեղ հարթ» և «ցինկապատ թիթեղ հարթ» ապրանքային տեսքը տանիքի ծածկ է, թե ոչ:

Նշված թերության հետևանքով Պատասխանողը վիճարկվող վարչական ակտերում որպես փաստական հիմնավորում նշել է միայն, որ Հայցվորի կողմից կոմպլեկտավորման արդյունքում վաճառվել են նաև մաքսատուրքի արտոնությամբ ներմուծված «Սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով» ապրանքատեսակը հարթ վիճակում, առանց լրացուցիչ վերամշակման:

Մինչդեռ առկա չէ որևէ նշում առ այն, թե «սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով» ապրանքի և վաճառված «գունավոր թիթեղ հարթ» և «ցինկապատ թիթեղ հարթ» ապրանքի մեջ ինչ տարբերություններ կան, ինչպիսի մշակման, հղկման արդյունքում է ստացվում հարթ թիթեղը և արդյոք այն հանդիսանում է տանիքի ծածկ, թե ոչ:(...)»:

Վերաքննիչ դատարանը 22.05.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 15.02.2023 թվականի վճիռը թողել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ. *«(...) Ինչպես պարզվում է վիճարկվող ակտերի բովանդակությունից, դրանցով արձանագրվել է, որ հայցվոր ընկերությունը հումքն իրացրել է առաջնային ձևով, որպիսի եզրահանգման համար վարչական մարմինը հիմք է ընդունել բացառապես 07.03.2022 թվականի տեղեկանքը, 26.04.2022 թվականի հայտարարությունը, ինչպես նաև հաշվպահական հաշվառման փաստաթղթերը:*

Ուսումնասիրելով 17.03.2022 թվականի տեղեկանքը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դրանում, որպես ձեռքբերված և իրացված ապրանքի անվանում, նշված է

«ցինկապատ թիթեղ ներկված», այսինքն՝ ձեռքբերված և իրացված ապրանքի անվանումը նույնանում են: Իսկ վիճարկվող վարչական ակտերի կայացման համար հիմք հանդիսացած հարկային հաշիվներում ընկերության կողմից մատակարարված ապրանքի անվանումը նշված է՝ «գունավոր թիթեղ հարթ» և «ցինկապատ թիթեղ հարթ»:

Վերաքննիչ դատարանը ևս նկատում է, որ ինչպես տեղեկանքով, այնպես էլ հարկային հաշիվներով մատակարարված ապրանքների նկարագրությունը տարբերվում է ապրանքի առաջնային ձևի նկարագրությունից, այն է՝ «սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով»: Այսինքն՝ առաջնային ձև գլանապատված է, մատակարարված ձևն, ըստ այդ փաստաթղթերի, ոչ:

Հաջորդիվ, անդրադառնալով 26.04.2022 թվականի հայտարարությանը, որով «Սթիլ Կոնցեռն» ՍՊ ընկերության տնօրենը հայտնել է, որ ներմուծված հումքի որոշակի մասը կոմպլեկտավորման արդյունքում ձևավոր վերամշակում չի անցել, ըստ պատվիրված չափերի՝ կտրտվել և վաճառվել է հարթ վիճակում, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ նշված հայտարարությունից առնվազն հետևում է, որ ներմուծված ապրանքը կտրտվել է:

Այսինքն՝ նշված փաստաթղթերից, որոնք հիմք են հանդիսացել վիճարկվող ակտերի կայացման համար, հետևում է, որ ընկերության կողմից ներմուծված ապրանքները չեն իրացվել առաջնային ձևով՝ առնվազն կտրտվել են:

(...) վեճի առարկա ակտերի կայացման համար հիմք ընդունված 07.03.2022 թվականի տեղեկանքը, 26.04.2022 թվականի հայտարարությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման փաստաթղթերը բավարար չեն պարզելու նաև՝ արդյոք հայցվոր ընկերության կողմից ներմուծված ապրանքն օգտագործվել է նպատակային՝ ներդրումային ծրագրի իրականացման շրջանակներում որպես տանիքի ծածկ, թե՝ ոչ:

Իսկ պատասխանողը նշված հանգամանքը քննության առարկա չի դարձրել, բազմակողմանի քննություն չի իրականացրել՝ պարզելու արդյոք սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով ապրանքային տեսքից ստացված «գունավոր թիթեղ հարթ» և «ցինկապատ թիթեղ հարթ» ապրանքային տեսքը տանիքի ծածկ է, թե՝ ոչ, ձեռք չի բերել լրացուցիչ ապացույցներ:

(...) սույն դեպքում պատասխանողի կողմից քննության առարկա չի դարձվել առանցքային նշանակություն ունեցող այն հարցը՝ արդյոք «սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով» ապրանքային տեսքից ստացված «գունավոր թիթեղ հարթ» և «ցինկապատ թիթեղ հարթ» ապրանքային տեսքը տանիքի ծածկ է, թե՝ ոչ: Փոխարենը վիճարկվող վարչական ակտերում, որպես փաստական հիմնավորում, նշվել է միայն, որ ընկերության կողմից կոմպլեկտավորման արդյունքում վաճառվել են նաև մաքսատուրքի արտոնությամբ ներմուծված «Սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով» ապրանքատեսակը հարթ վիճակում, առանց լրացուցիչ վերամշակման:

Մինչդեռ վեճի առարկա վարչական ակտերում առկա չէ որևէ նշում առ այն, թե «սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով» ապրանքի և վաճառված «գունավոր թիթեղ հարթ» և «ցինկապատ թիթեղ հարթ» ապրանքի մեջ ինչ տարբերություններ կան, ինչպիսի մշակման, հղկման արդյունքում է ստացվում հարթ թիթեղը և արդյոք այն հանդիսանում է տանիքի ծածկ, թե՝ ոչ:(...)»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ կառավարության կողմից 19.03.2020 թվականին ընդունվել է «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» թիվ 311-Ա որոշումը, որով բավարարվել է Ընկերության կողմից ներկայացված հայտը գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար, և սահմանված կարգով կիրառվել է համապատասխան արտոնությունը՝ համաձայն հավելվածի ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ:

Թիվ 311-Ա որոշման հավելվածի համաձայն՝ ներմուծման մաքսատուրքի արտոնությունից օգտվող հումքն է՝ սև մետաղյա ցինկապատ հարթ թիթեղ գլանափաթեթով, չներկված՝ առանց պոլիմերային ծածկույթի, և սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատ հարթ թիթեղ գլանափաթեթով, ներկված՝ պոլիմերային ծածկույթով:

Ըստ Թիվ 311-Ա որոշմամբ բավարարված՝ Ընկերության հայտում ներկայացված ներդրումային ծրագրի՝ ներմուծվող հումքի և նյութերի կիրառմամբ պետք է իրականացվի ցինկապատ մետաղական տանիքի ծածկերի, ջրահեռացման համակարգերի և համալրող այլ աքսեսուարների, եվրոդուռ-լուսամուտների և գիպսակարտոնի պրոֆիլների արտադրություն:

Ընկերությանը նշված արտոնությունը տրամադրվել է ՀՀ կառավարության Թիվ 1118-Ն որոշման հիման վրա, որով հաստատված Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետն արգելում է արտոնությամբ ներմուծված հումքի և (կամ) նյութերի օտարումը ներմուծված առաջնային ձևով մինչև ներդրումային ծրագրի իրականացման ժամկետի ավարտը կամ Եվրասիական տնտեսական միության ապրանքի կարգավիճակ ձեռք բերելը: Այսինքն՝ Կարգի 7-րդ կետի

2-րդ ենթակետով սահմանված է արտոնությամբ ներմուծված ապրանքի օտարման սահմանափակում:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանականորեն բաց թողնված են համարվում «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպվող այն ապրանքները, որոնց դեպքում կիրառվել են ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման համար սահմանված արտոնություններ, որոնք զուգակցված են այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման հետ կապված սահմանափակումներով:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված՝ պայմանականորեն բաց թողնված ապրանքների առնչությամբ պետք է պահպանվեն ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման արտոնությունների տրամադրման նպատակներն ու պայմանները, ինչպես նաև այդպիսի արտոնությունների կիրառման հետ կապված այդ ապրանքների օգտագործման և (կամ) տնօրինման մասով սահմանափակումները:

ՀՀ կառավարության Թիվ 1118-Ն որոշմամբ ևս շեշտադրված է այդ որոշմամբ տրամադրված արտոնությունից օգտվող ապրանքների՝ պայմանականորեն բաց թողնված համարվելու հանգամանքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մաքսատուրքի արտոնությամբ Ընկերության կողմից ներմուծված հումքն առաջնային ձևով օտարման արգելքի ուժով հանդիսանում է պայմանականորեն բաց թողնված ապրանք, որպիսի արգելքի խախտումը հանգեցնում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի խախտման:

Վիճարկվող 04.05.2022 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0018-Ա ակտով Ընկերությանը վերագրվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ և 134-րդ հոդվածների խախտում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունն արտոնությամբ ներմուծված հումքն օտարել է առաջնային ձևով: Ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը հաստատված չեն համարել Ընկերության կողմից ներմուծված հումքն առաջնային ձևով օտարելու և ըստ այդմ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ և 134-րդ հոդվածների պահանջի խախտման փաստերը: Վերջիններս գտել են, որ ներմուծված գլանափաթեթներից կտրտված հարթ թիթեղների օտարումը չի կարող գնահատվել որպես հումքի առաջնային ձևով օտարում:

Արտագնա ստուգման վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության տնօրենի կողմից կազմված 07.03.2022 թվականի տեղեկանքի համաձայն՝ «Կառավարության 19 մարտի 2020թ. թիվ 311-Ա որոշման հիման վրա գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից 72107080000 ծածկագրով ներմուծվել է 546 286կգ ցինկապատ թիթեղ ներկված, որից ամբողջական գլանափաթեթով վաճառք չի կատարվել, միայն 41 190կգ

թիթեղն է վաճառվել հարթ վիճակում, որը կոմպելկտավորման արդյունքում ստացել է կոնկրետ տեսք ու չափ»: Արտագնա ստուգման շրջանակներում Ընկերության տնօրենի կողմից 26.04.2022 թվականին տրված հայտարարության համաձայն՝ ««Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ի կողմից (...) ՀՀ կառավարության 19 մարտի 2020թ. թիվ 311-Ա որոշման հիման վրա ՀՀ են ներմուծվել վերամշակման նպատակով, սակայն ցինկապատ հարթ թիթեղներ, հումքը որոշակի մասը կոմպլեկտավորման արդյունքում ձևավոր վերամշակում չի անցել, ըստ պատվիրված չափերի կտրտվել և վաճառվել է հարթ վիճակում:»:

Հայցադիմումում, վճռաբեկ բողոքի պատասխանում Ընկերության ներկայացուցիչը ևս ընդունում է, որ վաճառվել են գլանափաթեթից կտրտված հարթ թիթեղներ՝ պնդելով, որ «հարթ թիթեղ ստանալու համար հումքն անցնում է վերամշակում հատուկ հաստոցի օգնությամբ՝ 4-5 աշխատողների մասնակցությամբ: Միաժամանակ, հայցադիմումում լուսանկարով ներկայացվել են «հումք հանդիսացող ներկրված գլանափաթեթը, դրա վերամշակման (հարթեցում և կտրատում) արդյունքում ստացվող և վաճառված հարթ թիթեղը, և դրա ձևավոր վերամշակման (հարթեցում, ձևավոր մշակում և կտրատում) արդյունքում ստացվող ձևավոր թիթեղները»:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերության կողմից օտարվել են մաքսային արտոնությամբ ներմուծված հումքից՝ գլանափաթեթից կտրտված հարթ թիթեղներ, որոնք ձևավոր մշակում չեն անցել: Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ ներմուծված հումքն այդպիսով ենթարկվել է որոշակի փոփոխության, այնուամենայնիվ, վերն արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան, ընդգծում է, որ գլանափաթեթը (հումքը) դադարում է իր առաջնային ձևով գոյություն ունենալուց, եթե արտադրական գործընթացի արդյունքում այն վերածվել է Ընկերության հայտում նկարագրված ներդրումային ծրագրով նախատեսված որևէ արտադրատեսակի (ցինկապատ մետաղական տանիքի ծածկեր, ջրահեռացման համակարգեր և համալրող այլ աքսեսուարներ, եվրոդուռ-լուսամուտներ և գիպսակարտոնի պրոֆիլներ):

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը, չհերքելով Ընկերության ներկայացուցչի այն պնդումը, որ գլանափաթեթից կտրատելու միջոցով հարթ թիթեղներ առանձնացնելու (ստանալու) համար հատուկ հաստոցի օգնությամբ կատարվում է որոշակի թվով աշխատակիցների մասնակցությամբ վերամշակում, միաժամանակ արձանագրում է, որ նման վերամշակման արդյունքում հումքի (գլանափաթեթի) կրած փոփոխությունը, այնուամենայնիվ, չի հանգեցրել Ընկերության հայտում նկարագրված որևէ արտադրատեսակի՝ վերջնական արդյունքի արտադրության: Ինչ վերաբերում է Ընկերության կողմից վկայակոչված՝ հարթ թիթեղների գնորդների հայտարարություններին, ապա դրանց բովանդակության ուսումնասիրությունը ևս թույլ չի տալիս եզրակացնել, որ վերջիններս Ընկերությունից գնել են Ընկերության հայտում նկարագրված որևէ արտադրատեսակ, մասնավորապես, ցինկապատ մետաղական ծածկեր:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մաքսային մարմինը փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում

իրավաչափորեն եզրահանգել է Ընկերության կողմից արտոնությամբ ներմուծված հումքն առաջնային ձևով օտարելու և ըստ այդմ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ և 134-րդ հոդվածների խախտման մասին, որպիսի պայմաններում Դատարանը և Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգում են կատարել Ընկերության կողմից Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ հումքի օտարման արգելքի և դրա հետևանքով՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ և 134-րդ հոդվածների պահանջների խախտման փաստի բացակայության մասին:

Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում նաև Դատարանի և Վերաքննիչ դատարանի հետևությունները «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածներով համապատասխանաբար սահմանված՝ բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների մասին նշում պարունակելու և հիմնավորվածության պահանջների խախտման մասին: Վիճարկվող 04.05.2022 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0018-Ա ակտում որպես էական փաստական հանգամանք նշված է. «Մաքսատուրքի արտոնությամբ ներմուծված ապրանքների շարժի վերաբերյալ ընկերության կողմից ներկայացվել է 07.03.2022թ. տեղեկանքը և 26.04.2022թ. հայտարարությունը, համաձայն որի ընկերության կողմից կոմպլեկտավորման արդյունքում, վաճառվել են նաև մաքսատուրքի արտոնությամբ ներմուծված «Սև մետաղյա եկկողմանի տաք ցինկապատված հարթ թիթեղ՝ ներկած, պոլիմերային ծածկույթով, գլանափաթեթներով» ապրանքատեսակը հարթ վիճակում, առանց լրացուցիչ վերամշակման:»: Միաժամանակ, նշված է, որ դրանով չի պահպանվել պայմանականորեն բաց թողնված ապրանքներին վերաբերվող սահմանափակումների պահանջը, ինչը հանգեցրել է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 126-րդ և 134-րդ հոդվածների պահանջների խախտման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ եՎճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի

անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեի կողմից վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարվել է համապատասխանաբար 38.000 ՀՀ դրամ և 48.000 ՀՀ դրամ: Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոմիտեի կողմից վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումարներից՝ 20.000 ՀՀ դրամի և 30.000 ՀՀ դրամի չափով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Ընկերության կողմից: Հաշվի առնելով, որ վերաքննիչ բողոքի և վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը ենթակա էր վճարման համապատասխանաբար 20.000 ՀՀ դրամի և 30.000 ՀՀ դրամի չափով՝ 36.000 ՀՀ դրամը ենթակա է վերադարձման Կոմիտեին՝ որպես ավել վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 22.05.2024 թվականի որոշումը և այն փոփոխել. «ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետբացթողումային հսկողության վարչության 04.05.2022 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0018-Ա ակտը և «Մաքսային գործի ոլորտում» թիվ 0018-Ո-1 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. «ՍԹԻԼ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, և 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող ***Հ. ԲԵԴԵՎՅԱՆ***

Զեկուցող ***Լ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ